

Ա. Գալստյան

ՍՍՐԱՏ ԳՈՒՆԴՍՏԱԲԼԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ՄԱՍԻՆ

Հայ ժողովուրդը որպես Արևելքի ամենահնագույն ժողովուրդներից մեկը, համամարդկային կուլտուրայի ստեղծման բնագավառում ունի իր արժանավոր տեղը: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը բազմիցս նվաճվել է օտար բռնակալների կողմից, հարստահարվել է ու թալանվել, հայ ժողովուրդը գրականության, արվեստի, կուլտուրայի բոլոր բնագավառներում ցուցաբերել է իր կարողությունը, ստեղծագործական տաղանդը:

Հայտնի է, որ դեռևս Բագրատունիների տիրապետության շրջանում հայերի մի խոշոր հատված փոխադրվեց Կիլիկիա և ամրանալով Տավրոսի բարձրաբերձ լեռների անառիկ վայրերում, ստեղծեց հայկական պետականություն: Այստեղ ծաղկեց ու ընդարձակվեց Հայկական Ռուրիկյան թագավորությունը, որն իր գոյությունը պահեց երեք դար:

Կիլիկյան թագավորությունը իր տնտեսական և առևտրական գործարքներով դարձավ Արևելքի հզոր պետություններից մեկը: Այնտեղ ստեղծվեցին հայկական ֆեոդալական հարաբերություններ արևմտա-եվրոպական ֆեոդալիզմի ձևով, ստեղծվեցին կուլտուրական օջախներ:

«Սիս», «Հոռմկլա», «Սև լեռ», «Կարմիր վանք» և այլ վայրեր 12—13-րդ դարերում դառնում են կուլտուրական կարևոր կենտրոններ: Ուշագրավ են Հեռն 2-րդի կողմից Կիլիկիայում հիմնված հայկական «վարժարանները» իրենց մատենագրականներով:

Հայ միջնադարյան կուլտուրայի համար խոշոր նշանակություն ունի Կիլիկիայի մանրանկարչությունը, որի լավագույն ներկայացուցիչներն են 13-րդ դարի հայ նշանավոր նկարիչներ Թորոս Ռոսլինը և Սարգիս Պիծակը: Կիլիկյան Հայաստանը հայ ժողովրդին տվեց այնպիսի անվանի դեմքեր, ինչպիսիք են՝ Ներսես Շնորհալին, 12-րդ դարի անվանի բժիշկ Մխիթար Հերացին, Իրիգոր Մարաշցին, Վահրամ Ռաբունին և ուրիշները:

Այդ բոլոր գիտնականների ու գրողների մեջ նշանավոր զորավար և պատմագիր Սմբատ Գունդստարլը ունի իր արժանի տեղը: Սմբատ Գունդստարլը պատկանում է այն հազվագյուտ հայ գիտնականների շարքին, որոնք չեն պատկանել հոգևոր դասին:

Դժբախտաբար մինչև այժմ նրա երկերը, նրա գիտական աշխատությունները անհրաժեշտ խորությամբ չեն ուսումնասիրված, իսկ եթե առանձին գիտնականներ փորձ են արել հետազոտելու Սմբատի թողած ժառանգությունը, ապա այդ հետազոտությունները շատ միակողմանի են, ի հակասություններով: Այսպես, մի շարք հայագետներ՝ Ղ. Ալիշան, Վ. Լանգլուա, Հ. Կարստ, Ա. Ղլտյան և ուրիշներ, զբաղվելով նրա ստեղծագործություններով, հայտնել են հակագիտական և միանգամայն հակասական տեսակետներ:

Սմբատ Գունդստարլը հայտնի է ոչ միայն որպես պոետ, պատմաբան, փիլիսոփա, զորավար, զինանագետ, այլև որպես իրավաբան։ Նա հեղինակն է Կրիկյան Հայոց թագավորության Վատաստանագրքի, որը 13-րդ դարում պրակտիկ նշանակություն ունեցավ Կրիկիայի հայ պետականության ամրապնդման գործում։

Եթե ուսական Գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ 19-րդ դարում առաջին անգամ հիմք դրվեց Սմբատ Գունդստարլի պատմագրության ուսումնասիրությանը, ապա նրա Վատաստանագրքը երկար ժամանակ մնաց անհայտ։ Հովհաննիսյանը, որը 1856 թվականին Մոսկվայում առաջին անգամ հրատարակեց Սմբատ Գունդստարլի պատմագրությունը, նրա Վատաստանագրքի մասին ոչ մի խոսք չի հիշատակել։ Հայագետ Վիլտոր Լանգլուան 1862 թվականին Պետերբուրգում ֆրանսերեն թարգմանությունը, ընդարձակ ծանոթություններով հրատարակեց Սմբատի Պատմագրության երկրորդ մասը¹, սակայն նա նույնպես չի հիշում Վատաստանագրքի մասին։ Կ. Վ. Շահնազարյանը 1859 թվականին Փարիզում հրատարակեց Սմբատի Վատմություն համեմատական տեքստը, ընդարձակ ծանոթություններով ու կոմենտարիաներով²։ Սա նույնպես Սմբատի Վատաստանագրքի մասին չի խոսել։

Առաջին անգամ 1870 թվին Կոստանդնուպոլսի «Հոյս» ամսագրում³ Հովհաննես քահ. Մկրչյանը մի հոդված է հրատարակում Սմբատի Վատաստանագրքի մասին, հետևյալ վերնագրով՝ «Օրինագիրք և Դատաստանագիրք մեր Ռուրինյաց Հեթում և Լևոն թագավորներում»։ Մկրչյանի օգտագործած ձևագիրը հայանաբերվել է 1331 թվականին Հալեպ քաղաքում և պահվում է Վենետիկի Մխթարյանների գրադարանում։ Հետագայում հայտնաբերվեց մի նոր ձևագիր ևս, որը գտնվում է Երևանի Մատենադարանում։ Այդ ձևագիրը արտագրված է 1618 թվականին։ Ահա այս երկու ձևագիրներն են, որ հասել են մեզ և հիմք են հանդիսացել Սմբատ Գունդստարլի Վատաստանագրքի գիտական ուսումնասիրմանը։

1876 թվին Ղևոնդ Ալիշանի նախաձեռնությամբ Վենետիկում հրատարակվում է Սմբատի «Անտիոքի Անսիզներին» հայերեն թարգմանությունը ֆրանսերեն տեքստի հետ⁴։ Ինչպես հայտնի է, այդ օրենսգիրքը հին ֆրանսերենից թարգմանել է Սմբատ Գունդստարլը և ֆրանսերեն տեքստը կորել է Սմբատի թարգմանության հայերեն տեքստը նորից թարգմանվել է ֆրանսերեն և համարվում է սկզբնաղբյուր, որը կարևոր նշանակություն ունի միջնադարի իրավունքի պատմության ուսումնասիրության համար։ Ֆրանսերեն թարգմանության առաջարկում Ղևոնդ Ալիշանը գրում է. «Բացի իր տարեգրությունից և նամակներից՝ Սմբատը մեզ համար թողել է երկու ավելի մեծագիր գրվածքներ։ Եվ թեպետ ինքը չէ նոցա հեղինակը, բայց և այնպես արժանի է ամենայն հարգանաց»⁵։

Նույն գրքի առաջարկում ասված է. «Գօշի Դատաստանագիրքը Սմբ-

¹ V. Langlois, Extrait de la chronique de Sempad, Petersburg. 1862

² Տարեգիրք Սմբատայ Սպարապետի 1859, Փարիզ։

³ «Հոյս», 1870, № 151։

⁴ Assises d'Antioche, Venise, 1876 (տես նաև «Սմբատ Գունդստարլ հայոց և Անտիոք Անտիոքայ-Վագմավել», 1870)։

⁵ Տես Assises d'Antioche-ի ֆրանսերեն թարգմանության առաջարկ, էջ 16։

րատի կողմից թարգմանվեց և այն օգտագործվեց հասարակ դատարաններում, իսկ բարձր թագավորական դատարանների համար հայերը օգտագործում էին Արևմտյան Ֆեոդալների օրենքները¹։

Մխիթարյան միարանության մի այլ անդամ՝ Դ. Հարրհանյանը 1886 թվին Վենետիկում հրատարակած «Պատմութիւն հայերեն գպրութեանց» աշխատության մեջ ընդգծում է, որ Սմբատի «Դատաստանագիրքը» — Մադկաքաղ է թի դատաստանագրոցն Մխիթարայ Գոշի և բիւզանդական օրինադրոց — որ արդեն ծանօթ էին յազգին թարգմանութեամբ Լամբրոնացուն²։

Նույն կարծիքն է հայտնում Լ. Հոֆհանյանը իր «Հետազոտութիւնք նախնեաց ոսմկօրենի վրայ» գրքում, թե Սմբատի «Դատաստանագիրքը» Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» էր նոր խմբագրությամբ³։

Հայագետ Մորգանը իր, Փարիզում հրատարակած «Histoire du peuple arménien» աշխատության մեջ, խոսելով Սմբատի «Դատաստանագրքի» մասին, գրում է. «Սմբատը գոհնկացման և նթարկեց Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»⁴։

Իսրելի է բերել ևս մի շարք հայագետների կարծիքները, որոնք տարբեր արտահայտություններով, նույնն են կրկնում առանց լուրջ չիֆնավորման։ Այս բանասերներից և ոչ մեկը լրջորեն չի զրադվել «Դատաստանագրքով», հետևաբար նրանց այդ հապճեպ հայտարարությունները որևէ արժեք չեն կարող ներկայացնել գիտության համար։

Առաջին անգամ Սմոնտի «Դատաստանագրքով» զրադվեց հայագետ Հյուրշմանի աշակերտ Լ. Կարստը⁵։

Նա 1896 թ. Բեռլինից գալիս է Վենետիկ, ուսումնասիրում Սմոնտի «Դատաստանագրքի» ձեռագիրը, այնուհետև՝ 1899 թ. գալիս է Հայաստան, ուսումնասիրում Էջմիածնի մատենադարանի օրինակը՝ նպատակ ունենալով կազմել «Դատաստանագրքի» քննական տեքստը երկու ձեռագրերի հիման վրա։ Վերադառնալով Գերմանիա, Կարստը 1905 թ. Սարասբուրգում հրատարակում է «Դատաստանագիրքը» գերմաներեն թարգմանությամբ⁶։

Կարստը Սմոնտի «Դատաստանագրքի» հայերեն տեքստի տակ տվել է Վենետիկի և Էջմիածնի ձեռագրերի տարբերությունները։ Իսկ համապատասխան հոդվածների տակ հրատարակել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքից», իր կարծիքով, նույնանման հոդվածներ, ցանկանալով ապացույցել, որ այդ հոդվածները Սմբատը թարգմանել է Գոշից⁷։

Նույն Կարստը 1906 թվականին հրատարակում է «Հայ իրավունքի պատմության ուրվագծեր» աշխատությունը⁸։ Որտեղ հեղինակը ճգնում է ապացուցել (ինչպես նրանից առաջ փորձել են այդ անել եվրոպացի այլ գիտնականներ), որ հայերը ընդհանրապես չեն ունեցել իրենց իրավունքը և իրավունքի պատմությունը, չեն ունեցել օրենքների ժողովածուներ և այլն,

¹ Assises d'Antioche-ի ֆրանսերեն թարգմանության առաջաբան, էջ 19։

² Դ. Հարրհանյան, «Պատմութիւն հայերեն գպրութեանց», Վենետիկ, 1886, էջ 750։

³ Morgan—Histoire du peuple Armenien, Paris, 1919, p. 313.

⁴ J. Karst—Sempadsches Kodex aus dem XIII Jahrhundert oder mittelarmenisches Rechtsbuch. Strassburg, 1905.

⁵ Karst—Grundriss der Geschichte des armenischen Rechts, 1906, Stuttgart.

որ հայերը իրենց իրավունքի ազդրուրը դարձրել են եվրոպացիների իրավական նորմաները և օգտագործել են եվրոպական օրենքներն ու դատաստանագրքերը:

Եվ որովհետև, ըստ եվրոպացի այդ գիտնականների, իրր թե Գոշի «Դատաստանագիրքը» հայկական ծագում չունի և փոխառնված է եվրոպական օրենսգրքերից, հետևապես Սմբատ Գունդստարլի «Դատաստանագիրքը» նույնպես հայկական չէ և ոչ մի առնչություն չունի հայ իրավունքի պատմության հետ:

Ինչպես Կարստի, այնպես էլ նրա համախոհների այդ պնդումները հակագիտական են և հակասում են գոյություն ունեցող պատմական փաստերին: Կղերա-բուրժուական հայ բանասերներից մի քանիսը ևս ստորաքարշությունով եվրոպական գիտնականներին հաճոյանալու համար ոչ միայն չառարկեցին այդ հակագիտական տեսակետների դեմ, այլ, ընդհակառակը, սկսեցին գովարանել Կարստի անընդունելի տեսակետը: Այսպես, օրինակ՝ 1907 թվականին Հ. Ասատրյանը «Բազմավեպ»-ում հանդես եկավ հատուկ հոդվածով. «Պրոֆեսոր Կարստի ուրուագիծ հայկական իրաւագիտութեան պատմութեան» — խորագրով, որտեղ ստորաքարշ քծնանքով գովարանում է այդ աշխատությունը, առանց որևէ դիտողություն¹:

Նույնպիսի կարծիք է հայտնել հայտնի ռեակցիոն բանասեր Ն. Ակինյանը իր «Ակնարկ մը հայ իրավանաց պատմութեան վրա. Յ. Կարստի երկուսումնասիրությունները» հոդվածում², որտեղ հեղինակը մեծ գովասանքով է խոսում Կարստի գրքի մասին: Իրավարանություն դրող Ս. Լըլտը՝ չյանը 1913 թվականին Ալեքսանդրապոլում հրատարակած իր «Հայ հին իրավունք» աշխատության մեջ գրում է. «Կարստը տվել է ամենակատարելագործված հետազոտությունը»³ և շարունակում է. «Ես ձգտել եմ ցույց տալ, և այն ոչ առանց հաջողություն, որ զուտ հայկական ազդրուրների շարքում Գոշի և Սմբատի դատաստանագրքերը տեղ չունեն բռնելու ու նոցա տրվյալները իրեն ազգային իրավունքի նյութ ոչ կարելի է քնդունել, և ոչ էլ օգտագործել»:

Պրոֆեսոր Սաչիկ Սամվելյանը նույնպես 1939 թ. երևանում հրատարակած իր «Հայ հին իրավունքի պատմություն» աշխատության մեջ խոսելով Սմբատի «Դատաստանագրքի» մասին, կրկնում է նույն կարծիքը, ինչ տեսել են Կարստը և նրան հետևող այլ գիտնականներ:

* * *

Սմբատի «Դատաստանագիրքը» արժանացել է երկու տպագրություն. Մեկը՝ Կարստի 1905 թվականի «գիտական» հրատարակությունն է, մյուսը՝ Ա. Ղյուճյանի կողմից 1918 թ. էջմիածնում կատարված հրատարակությունն է⁴:

Սրանցից վերջինը՝ Ղյուճյանի հրատարակությունը այնքան արատավոր է և անփույթ կատարված, աղավաղումներով ու սխալներով լի, որ ավելորդ է նք համարում մանրամասն խոսել այդ մասին:

¹ «Բազմավեպ» 1907 թ., էջ 71:

² «Հանդէս Ամսօրեա» 1907, էջ 42—43:

³ Արսեն Ղլտըն — «Հայոց հին իրավունք», Ալեքսանդրապոլ 1913 թ., էջ 4—5:

⁴ Նույն տեղում, էջ 28:

«Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստարլի) ձեռագրերի համեմատությամբ լոյս տեսնող Արսեն Վաղդապետ Ղլտընի, 1918 թ.:

Կարստի այսպես կոչված «գիտական» հրատարակությունը նույնպես չնայած իր արտաքին ձևավորմանը, տեխնիկական առավելություններին, պարունակում է բազմաթիվ աղավաղումներ, անճշտություններ:

Էջմիածնի Մատենադարանի օրինակի մի շարք բառեր Կարստի հրատարակությունում աղավաղված են.

Կարստի մոտ տպագրված է.	Սմբատի ձեռագրում գրված է.
անձնիրոց (1-ին հատ. էջ 44)	անձին իւրոյ (էջ 33)
իջուանքն յայն (էջ 58)	իջևանքն յանդիպի (էջ 60)
դատեն և հաւնաւրեն (էջ 33)	դատեն և առնուն իրք (էջ 53ա)
ճիճն կարգալ (էջ 101)	ժիր կարգալ (էջ 69ա):

Կարստի մոտ շատ բառեր և նախադասություններ աղավաղված են: Որպես ապացույց բերենք մի հոգիված, որը ցայտուն կերպով դրսևորում է այն տարրերությունը, որ կա Կարստի հրատարակության և ձեռագրի մեջ.

Կարստի մոտ կարդում ենք (հոգիված № 175):

Շնոյնպէս եւ հովիւք եւ արտապանք եւ այդէպանք եւ այլ այսպիսիքն որ ի վերայ այլ եւ այլ գաւառաց եւ երկրի այլ եւ այլ սովորութիւնք եւ տիպանք, եւ ոչ միապէս տան զվարձերն: Եւ իրաւունք է որ զգրած պոմանն և զվարձն անպակաս տան իրենց ու իրենք պարտին որ զիրենց պահքն անսղալ ու աղէկ պանեն: Բայց թէ ի գազանէ եւ ի կերչաց իրք մի սղալ գայ՝ նա թէ վկայքն աղէկ վկայեն որ իր բանիւ չէ, լել եւ ոչ յիր ուժոյն ֆնացել նա չպարտի իրք: Ապա թէ ընդ ծոյլութենէ լինա, նա դատըստանին եւ վնարն լինի ըստ մեղանացն ի լման վնար կամ կիսավնար. և ի լմանն այս է, որ սպրկիկ անրոյթ լինի այրել, և կէս այն է որ միջակ լինի ի փոյթն եւ յանփոյթն: Բայց չէ իրաւունք որ զվճարն ի վարձէն կտրեն. ապա դու զնորա վարձն տուր, և նա զքո պարտքն վճարէ, զգողցածն ու զգարկածն և զսպաննածն ու զկտորածն անսղալ վճարել պիտի: Նոյնպէս եւ զյղին ձգեց-վոր այնելն կամաւոր պատճառանաւք:

Եւ թէ վիրար քշտեն ու սպաննեն նա թէ արծաղին կաժաւք է, որ չտասաց կամ չգատեց, նա ըստ իրաւանացն լինի տուգանքն որպէս ասեն ու լսեն: Եւ այս ի վերայ մեծ անասնոցն ու երմկի և խաշանց և ամենայն չորքոտանաց մեկ երթայ՝:

Ճատաստանագրքի» էջմիածնի ձեռագրում գրված է.

Շնոյնպէս և հովիւք արատապանք և այդէպանքն և այլ այսպիսիք են որ ի վերայ այլ և այլ գաւառաց և երկրին, այլ և այլ սովորութիւնք և տիպոնք. և ոչ միապէս տան զվարձսն: Եւ իրաւունք է որ զգրած պոմանն և զվարձսն անպակաս տան իւրեանց: Եւ իւրեանքն պարտին, որ զիրեանց պահքն անսղալ և աղէկ առնեն: Բայց թէ ի գազանաց և ի կերչաց իրք մի սղալ գա: Նա թէ վկայք աղէկ վկայեն որ իւր բանիւ չելեալ և ոչ յիւր-ուժոյն ֆնացել նա չպարտի ինչ: Ապա թէ ի ծոյլութենէ լինի դատըստընին և վճար լինի ըստ մեղանացն ի լման վնարէ: Եւ թէ անուտելո և նա նոյնպէս: Եւ քե կորցնէ նա զինչ արժեմայ անասունն նա ի դ բաժնէն ա. տուգանքէ որ տայ տիրոջն նոյնպէս և քե զայգին կարէ նոյնէ:

Բայց աղէկ պիտի տեսնուլ և հարցանել վկայաւք որ ընդ վնասուն տերն՝

¹ Կ ր ս տ, էջ 217—218:

տարայայն ի ասցել լինի. և ի դարպաս այլ գնացել և քե շիճի գնացել խրատուել նա շտայ տուգանքը. և քէ տայ նա խիստ քշիկ: Բայց են այլք որոշ արտ՝ և ոչ այլ իրք բնաւ չունին: Եւ էութեամբ կուա ապրին՝ նա այնոց վնասն այլ ցեղէ: Նոյնպէս և տուգանքն. զի ամէն աշխարհս անասով մեն չկարեն ապրիլ զերդ թուրքմանն և այդ իրքդ ապականէ զերկիր, նա պիտի զայն ցեղն ծեծնաւք և տուգանօք և զանասունքն հանց պահեն որ վնաս չառնեն և թող երթան յան շենն ու պ սահմանած է իւրեանց, բայց ի վերայ ամի խոզիցն իսկի պատ չկարէ զիւրեանք արգելել: Զխոզարածքն երբ որ դնեն նա զմատակայ շինութին քակել զոր և պատեն տեսնուն և կամ սպանանել և ի շինութենեն վարել»¹:

Ինչպէս նկատուում է բերված հոդվածի տարբերությունից, կարստի հրատարակության մեջ ոչ միայն նկատվում են կոպիտ աղավաղումներ, այլ հոդվածների կարևոր մասի բաց թողում:

Մի ուրիշ տեղ «Դատաստանագրք»-ում ասված է՝ «Եթէ ֆեոդալի կալվածքում ոսկի կամ արծաթ գտնվի, այն կալատկանի այն թագավորին, որի խխանությունն ներքո է գտնվում տվյալ ֆեոդալի կալվածքը: Սմբատի խոսքերով՝ «Նա այն վայրի թագավորին լինի»². Նույն միտքը կարստը հրատարակել է «այլվայ թագավորի լինի»³: Այսպիսով, հոդվածի միտքը բոլորովին աղավաղված է:

Կարելի է բերել այսպիսի բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ կարստի հրատարակած տեքստը չի կարող հիմք դառնալ գիտական ուսումնասիրության:

* * *

Այն տեսակետը, թե Սմբատ Գունդստարը ինքը չի կազմել «Դատաստանագրքը», այլ վերցրել է Մխիթար Գոշից, թե դա լուրջ թարգմանություն է, միանգամայն սխալ է և անհիմն:

Կարստի և նրա հետևորդների միակ փաստարկումն այն է, որ Սմբատ Գունդստարը իր «Դատաստանագրքի» առաջարանում գրել է. «Բազումս աշխատանօք աշխատեցայ ի դատաստանագրքս ծերացեալ մտօք, մասն վի աշխակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս հայնց, որ խկի չէին ի հասկանալ և ոչ յօգտել գայր, և ես փոխեցի զսա բազում աշխատութեամբ ի հին և ի դժուարարառ և յանհասկանալի գրոց ի մեր հեշտալոր և ի սովորական բառս ի թուականութեանս հայոց ժԺԴ (1265)»⁴:

Անշուշտ այս վկայությունը ուշագրավ է և չի կարելի անտեսել, բայց դրանից չի հետևում, որ նա աշխատությունը թարգմանել է ինչոր մի աղբյուրից և այն էլ Գոշից:

Ամենայն հավանականությամբ Սմբատն իր տրամագրության տակ ունեցել է հայ օրենսդրության հետ կապված մի շարք գրքեր, որոնց բոլորի էլ բովանդակությունը նա կարող էր նկատի ունենալ իր «Դատաստանագրքը» գրելիս, ինչպես կաներ նման աշխատության կազմող ամեն մի գիտնական: Եվ այդ ենթադրությունը ոչ միայն չի նսեմացնում Սմբ-

¹ Ձեռագիր էջ 93բ—94ա:

² Ձեռագիր № 487, էջ 52 ա:

³ Կարստ, էջ 27:

⁴ Ձեռագիր № 487, էջ 47:

րատի գործի արժեքը, այլ ավելի է բարձրացնում, ցույց է տալիս, թե ինչպիսի գիտական բարեխղճություն և երկարատև հետազոտությունների արդյունք է նրա «Դատաստանագրքը»։ Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ «փոխեցի», «թարգմանեցի» հին հայերենում չեն ունեցել այն նշանակությունը, ինչ որ ունեն այժմ։

Այսպես, օրինակ, Մմրատը իր պատմությունը մեծ երբ խոսում է Կիլիկյան Հայոց Լևոն երկրորդ թագավորի կողմից հայ զորականներին պարգևներ տալու մասին, գրում է. «յորոց մի ես եմ Մմրատ ուղարակեալն րարգմանող տառիս և պատմութիւնս»¹ — այսինքն, ուզում է ասել, որ «պարգևատրողներից մեկն էլ ես եմ՝ Մմրատս՝ այս պատմությունը գրողը» չնայած գործածում է րարգմանել բառը։ Այս օրինակով կասկածում, որ «պատմությունը» պատկանում է Մմրատ Գունդստարի գրչին։ Թարգմանող այստեղ հասկացվում է գրող, կամ «մեկնարանող»։ Մի ուրիշ տեղ Մմրատը խոսում է իր ծննդյան թվի մասին. «Ի թուին 657 (1208) ծնաւ Մմրատ Գունդստարին, Թարգմանող պատմութեանս»²։ Այստեղ նույնպես թարգմանող նշանակում է պատմությունը գրող և ոչ թե թարգմանող։

Եթե Մմրատը թարգմանած լիներ Մխիթար Գոշի «Դատաստանագրքը» անշուշտ, այդ մասին իր երկերում որևէ տեղ հիշատակեր, կարիք չուներ թաքցնելու, մանավանդ, որ նա ամեն դեպքում հիշատակում է ըստ իր այն աղբյուրները, որոնցից օգտվել է, լինեն դրանք ինքնուրույն ստեղծագործություններ, թե թարգմանություններ։ Այսպես, օրինակ, երբ նա խոսում է «Անտիոքի Անսիզներին» հին Ֆրանսերենից հայերեն լեզվի թարգմանություն մասին, որը կատարել է ինքը, ղեռ «Դատաստանագրքը» կազմեցուց առաջ, մանրամասն նկարագրում է և հիշատակում բոլոր այն գիտնականների անունները, որոնք օգնել են նրան և որոնց գիմել է ինքը։ Ես պատմում է, թե ինչպես հին Ֆրանսերենից իր կատարած թարգմանությունը ուղարկել է Անտիոք և խնդրել այնտեղի գիտնականների կարծիքները։

Նա իր «Դատաստանագրքի» մեջ առանձին հոդվածների կապակցությամբ հիշատակում է մի շարք աղբյուրներ ու հեղինակներ, բայց դրանց չարքին, դժբախտարար, ոչ մի տեղ չի հիշատակում Մխիթար Գոշի անունը որպես «Դատաստանագրքի» հեղինակ։ Այսպես, օրինակ՝ Մմրատը իր «Դատաստանագրքի» մեջ գրում է. «Տես ի յնրեանս գլուխն ի Ս. Գրիգոր Լուսաւորչին՝ զի ես՝ Մմրատ սպարապետս փնտռեցի ի կանոնքն և գտայ, որ գրել էր զայս...»³։

Մի ուրիշ տեղ ասված է. «Բայց ինձ Մմրատայ ծառայիս քրիստոսի յոյժ հարկ եղև յայս տեղիս գտնուլ զս. Սահակայ նախնոյ մերոյ գրեալ սահմանն և անտի ճշմարտի զուղղութիւն սահմանիս. և զայս անտի գրեւսաք համառօտ»⁴։

Մի ուրիշ տեղ Մմրատը գրում է. «Եւ ի յայս տեղս ոչ կարացի ես

¹ Ձեռագիր № 1900, էջ 45 (տես նաև «Տարեգիրք Մմրատայ Սպարապետի» Փարիզ, 1859 թ., էջ 110)։

² Տես Ն. Աճառյան, Առմ. բառ. հատ. Բ., էջ 1148։

³ Ձեռագիր № 4384, էջ 371, տես նաև ձեռագիր № 4337, էջ 56։

⁴ Ձեռագիր, էջ 63ր։

⁵ Ձեռագիր էջ 58ա։

Սմբատս զինչ ս. Սահակն գրել էր աստ օրինօք ի հին և ի նոր կտակարանացն ու պնդել և խրատել էր, նա ես թէ զայն զամէն գրել էի, նա ևս կարի շատ էր լեալ¹։ Մի ուրիշ տեղ. «Ջայն ի կանոնս չաք մի գրեցաք. ապա զմէկայն ի սահմանածն գտնոյք մի ըստ միո՞քն»։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Սմբատը ամեն առիթով հիշատակում է իր օգտագործած հեղինակներին, որոնցից մի քանիսը Գոշի մոտ հի էլ հիշատակված։ Եթե իր ձեռքի տակ ունեցած լինէր Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», անշուշտ, այդ մասին նա կհիշատակեր։

Սմբատ Գունդստարլը և Մխիթար Գոշը տարբեր ժամանակաշրջանի մարգիկ են։ Հայ անվանի գիտնական Մխիթար Գոշը, որն իրավամբ համարվում է 12-րդ դարի նշանավոր գեմքերից մեկը, ոչ միայն իր «Դատաստանագիրք»-ով, որը հայ իրավունքի պատմության էջերում պատվաբար տեղ է գրավում, այլև իր աշխարհօրհայտ ատակներով, խոշոր անուն վաստակեց։ Նա եղել է շատ երկրներում, և իր հայրենիքում՝ Գանձակ քաղաքում, 1184 թվականին սկսել է գրել իր «Դատաստանագիրքը»։ Հավանական է, որ նա այն վերջացրած պիտի լինէր 1210 թվականին, իսկ Սմբատը իր «Դատաստանագիրքը» գրել է Կիլիկիայում և ավարտել 1265 թվականին։

Անշուշտ, այս ժամանակամիջոցում հնարավոր էր, որ Գոշի «Դատաստանագիրքը» արտագրվեր և մի օրինակ ընկներ Կիլիկիա, և օգտագործվեր Սմբատի կողմից, սակայն, քանի որ Սմբատի մոտ այդ մասին չի պահպանված և ոչ մի ակնարկ, հիմք չկա պնդել այդ մասին։ Այդ երկու «Դատաստանագիրքերի» բովանդակությունները նույնպես հիմք չեն տալիս նման ենթադրություն։

Գոշը իր «Դատաստանագիրքը» կազմել է այնպիսի ժամանակաշրջանում, երբ Հայաստանում կործանվել էր Հայոց պետականությունը, չկային հայոց թագավորներ, իսկ հայ ֆեոդալներից ամեն մեկը ինքն իր մեջ ամփոփված, ղեկավարում էր գոյություն ունեցող հին նախարարական սովորություններով, կարգ ու կանոնով։ Նրանք ղեկավարվում էին գերազանցապես եկեղեցական կանոններով։ Այս հանգամանքը իր արտահայտությունն է գտել Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի» մեջ։ Գոշը իր «Դատաստանագիրքի» մեջ մտցրել է կրոնական մի շարք օրենքներ՝ մովսեսական, մահմեդական, հսկայական նյութեր է վերցրել հին ու նոր կտակարաններից։ Նրա «Դատաստանագիրքում» տեղ են գտել կանոնական իրավունքները, բյուզանդական օրենքները, հատկապես Հուստինիանոս կայսեր ժամանակաշրջանի օրենքները։

Սմբատը նպատակ է ունեցել կազմել Կիլիկյան Հայոց թագավորության համար կայուն օրենքներ, Կիլիկիայի հայ ժողովրդի խոսակցական լեզվով, որպեսզի գրանով կարողանա ուժեղացնել Կիլիկիայի Հայոց թագավորական կենտրոնական իշխանությունը, կարողանա ճնշել անհնազանդ հայ ֆեոդալների դիմադրությունը և ստիպել նրանց՝ ենթարկվելու Կենտրոնական իշխանությանը։

Այս բոլորն իր արտահայտությունն է գտել Սմբատի «Դատաստանագիրքում», որը և հայտուն կերպով նրա օրենքները տարբերում է Գոշի օրենքներից։

¹ Ձեռագիր էջ 60։

² » էջ 67ա։

Սմբատ Գունդստաբլը բոլորովին այլ վերաբերմունք ունի դեպի հանցագործը. դեպի մարդասպանը, քան Մխիթար Գոշը։ Սմբատը տարբերում է դիտավորյալ սպանությունը պատահականությունից, բայց երկու դեպքում էլ հանցագործին նա պատժի է ենթարկում անկախ նրանից, թե նա հարուստ է, թե աղքատ, աշխարհիկ է, թե հոգևորական։ Ըստ Սմբատի «Դատաստանագրքի», անկախ նրանից, ինչպիսի պայմաններում է գտնվում հանցագործը, նա պարտավոր է իր հանցանքը քավել, իր պարտքը վճարել. «և որ այսոր ույժ չունենայ որ վճարէ,—գրում է Սմբատը,— նա ծախեն զինքն և զիւր տունն ու զինչ որ ունենայ, զիւր ծախեն ու զինն տան»¹։

Ըսկ եթե հանցագործությունը կատարված է պատահական, ոչ գիտակցած ձևով, այն դեպքում տալիս են կեսը։ Սմբատի խոսքերով՝ «Եւ թե յոչ կամաց լինի սպանութիւնն, նա այսոր կէս գինն որ ի դարպասն տայ»²։

Այսպիսով, Սմբատը հանցագործի բախտը կապում է կենտրոնական իշխանություն հետ, եթե անգամ նա բանտ նստի, ժամկետը, պատժի չափը որոշում է թագավորը կամ ֆեոդալը։ Գոշը ընդհակառակը, ամեն ինչ կապում է տիրոջ կամքի, աստծո հայեցողության հետ...։ «Իսկ գինն արեան մարդոյն ըստ արժանւոյ զնոյ ոչ է զի գործ Աստուածոյ է եւ պատկեր եւս յարուցանել միայն Աստուծոյ է մեռեալ»³։

Գոշի համար գոյություն չունի կոնկրետ դատական պրոցես։ Նրա կարծիքով հասարակության մեջ կան բարի, ազնիվ մարդիկ, որոնք ենթակա չեն դատի, որոնց պատասխանատվության չպիտի ենթարկել. կան «չար մարդիկ», հասարակությանը ֆնասող մարդիկ, որոնց պետք է ոչնչացնել՝ հասարակությունը նրանցից մաքրելու համար։ Սմբատը դատավորներից պահանջում է ուշադիր և արդար վերաբերմունք դեպի մեղադրյալը, բազմակողմանի քննություն նրանց նկատմամբ՝ վկաների միջոցով, պահանջում է մանրամասնորեն պարզել տվյալ անձի հանցագործությունը և համապատասխան պատժի ենթարկել նրան։ Երբ նա խոսում է հարկահանությունից մասին, կոնկրետ ցույց է տալիս, թե ինչպես պիտի գանձեն հարկերը և որն է արդարության չափանիշը։ Հարկահանության դեպքում հարկերի որոշման ամբողջ պատասխանատվությունը դնում է աշխարհիկ իշխանությունից ներկայացուցիչների՝ ֆեոդալների ու թագավորի վրա։ Սըմբատը գրում է. «Ըղորդ հարկուն սահմանն այս, զինչ որ Ած. տայ հարկատուին ի հնկէն մէկն է. Զրադացք և այսպիսի շինւածք ազատ է։ Եւ ածուք ու այսպիսիք ի տասնէն զմէկն տանն և ի շաբաթն օր մի պարոնին բանի, և այլ աւել՝ ոչ բնաւ։ Եզն այլ ծառութիւն չպարտի, զի զիր հնկակն տվել է. կոֆն լիտր մի եղ տայ պարոնին և այլ խոտշիք չտայ»⁴։

Գոշը երբ խոսում է հարկահանության մասին չի ասում, թե ով պիտի վերցնի հարկը և ինչպես պիտի վերցնի, չի տալիս հարկի կոնկրետ չափը, յուրաքանչյուր օրեկտի կոնկրետ սահմանը։

Կարստի հայերեն տեքստի վերջում համապատասխան հոդվածների տակ հրատարակված է Գոշի «Դատաստանագիրքը» առանձին հոդվածներ։

¹ Ձեռագիր էջ 49ա։

² Նույն տեղում։

³ Մխիթար Գոշ «Դատաստանագիրք հայոց» Վաղարշապատ, 1880 էջ 308—309։

⁴ Ձեռագիր էջ 50ր. տեւ նաև Կարստի հ. 1-ին, էջ 22։

բով, որով հեղինակը ձգտում է ապացուցել, թե դրանք Գոշից թարգմանություններ են: Որպեսզի ցույց տանք, որ դրանք շատ տարբեր են միմյանցից և երբեք էլ մեկը մյուսի թարգմանությունը չէ, բերենք մի հոգված:

Սմբատը գրում է.

«Եթե ոք ի դուրս ի յիր աւ երակն յարտ կամ յայգի ոսկի գրութնու կամ արծաթ, նա թէ հին դադ կենայ ի վերայ, որ ճանչվի որ հին թագաւորի է լել, նա այն վայրի թագաւորին լինի, և ի հնկէն մեկն գտնողին և տան և տեղոյն տիրոջ»¹:

Գոշը գրում է.

«Եթե պատահիցի ումեք գտանել յանդաստանի կամ յայլ ի կալուած իւր, կամ ի շինել զտուն իւր, ոսկի կամ արծաթ ի գանձուց, եթե նմանութեամբ գիտասցեն թե յառաջնոց թագաւորաց է, արքունի լիցի, և գրտնողին տասնորդիցի յազագս տեղւոյն և գտանելոյն կրկին»²:

Որ այս հոգվածի ամբողջ խմբադրումը երկու դեպքում էլ միանգամայն տարբեր է և ենթադրել չի տալիս որևէ թարգմանություն, ակներև է, ինչ վերաբերում է նրա շոշափած հարցին, գտնված գանձը թագաւորին հանձնելու մասին, հասկանալի է, որ կարող էր և՛ Գոշը մտցնել իր Դատաստանագրքի մեջ, և՛ Սմբատը:

Ո՞ր ուրիշ փաստ. Գոշը գրում է. «... Բսկ եթէ իւր գողացեալ եւ ի յայտ եկեալ ըստ օրինացն պարտ ի վճարել: Այլ հարեալն եւ սպանեալն վճարեալ լիցի, ի քարէ կամ ի գաւազանէ նմանապէս և բեկանելն, կամ զյղի հարկանելըն և ֆնասելն: Ըստ այնմ լիցի եթէ ի վայր ելեալ մեռցի, յորժամ անփոյթ արար եւ մերձ ոչ էր: Դոյն լիցի և ձիսստանից և այլոց: Բսկ զմիմեանս հարեալ և սպանեալ ըստ օրինացն դատիցի»³:

Իսկ Սմբատը նույն խնդրի մասին բոլորովին այլ է գրում. «Բայց չէ իրաւունք որ զվճարն ի վարձէն կտրեն. ապա դու զնորա վարձն տուր, եւ նա զքո պարտքն վճարէ, զգողացածն ու զզարկածն եւ զսպանածն ու զկոտորածն անսղալ վճարել պիտի. նույնպէս և զյղին ձգեցվոր այնելն կամաւոր պատճառանաւք:

Եւ թէ զիրար քշտեն ու սպանեն՝ նա թէ արածաւդին կամաւք է, որ չասաց կամ չգատեց, նա ըստ իրաւանացն լինի տուգանքն, որպէս ասեն ու լսեն: Եւ այս ի վերայ մեծ անասնոցն ու երմկի եւ խաշանց եւ ամենայն չորքոտանեաց մեկ երթայ»⁴:

Վերջապէս կարելի է բերել ուրիշ շատ հոգվածներ, որոնք միայն արտաքին նմանություն ունեն, բայց ըստ էության շատ տարբեր են միմյանցից: Եվ եթե Սմբատի «Դատաստանագրքի» առանձին հոգվածներ նման են Գոշի «Դատաստանագրքի» հոգվածներին, այդտեղ ոչինչ չկա տարբերակ: Հասկանալի է, որ ֆեոդալական նույնպիսի հարաբերություններ օրինականացնող երկու տարբեր օրենսգետներ պետք է նման օրենքներ սահմանեն նույնպիսի հանցանքի կամ դեպքի համար: Շատ հավանական

¹ Ձեռագիր էջ 52ա

² Մի ի թար Գոշ, էջ 328, տեւ նաև Կարստ, էջ 27:

³ Նույն տեղում, էջ 434:

⁴ Կարստ, Հատ. 1, էջ 217—218:

է, որ այն աղբյուրները, որոնք օգտագործված են եղել Մխիթար Գոշի կողմից, նյութ են հանդիսացել նաև Սմբատի «Դատաստանագրքի» համար։

Սմբատի «Դատաստանագրքը», չնայած առանձին տերմինների, առանձին հոգվածների նմանությունը, թե իր կառուցվածքով և թե իր բովանդակությամբ տարբերվում է, թե՛ Դոշից և թե՛ Անտիոքի օրենքներից։

Սմբատ Գունդստարը իր «Դատաստանագրքը» կազմելու այն ժամանակ, երբ Կիլիկյան հայոց թագավորությունը զուրկ էր հայերեն դատաստանագրքերից։

Որ Սմբատի դատաստանագրքից առաջ, Կիլիկյան Հայաստանում չի եղել հայկական օրենսգիրք, այդ մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Ներսես Լամբրոնացին։ Նա գրում է. «Եւ պատահեալ անդ յասորոց Թեոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց տեառնս (Հայոց կաթողիկոս Գրիգորին), զի գոյր առ ինքն այս համառաւտ աւրինադրութիւնս և հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնասուն որդւոյ Ներսեսի յեղաշրջեցաւ ի հայս՝»։

Ներսես Լամբրոնացին թարգմանել է մի շարք ուրիշ օրենքներ դարձյալ ասորական, օրինակ՝ «Ջինուորական օրենքներ»² և քաղաքային՝ «Համառոտ ժողովումն օրինացս վերստին»³ և այլն։ Մենք ունենք, բացի վերոհիշյալ վկայություններից, Ներսես Լամբրոնացու ցուցմունքը այն մասին, որ իրոք Կիլիկյան հայոց թագավորությունը չի ունեցել հայկական օրենքներ և դատական կանոններ։ Լամբրոնացին գրում է. «Կիլիկյան Հայաստանում չէ ունէին գիրս, որով ընտրեսցին զիրաւունս, զոր և այլոց ազգաց տեսանէին»⁴։ Մի ուրիշ փաստ. երբ Կոստանդին իշխանը Լևոն երկրորդ թագավորի մահից հետո ապստամբվեց հայոց Ֆիլիպ թագավորի դեմ, տապալելով նրան, երկրի իշխանությունը իր ձեռքը վերցրեց, պետական բոլոր պաշտոնները իր որդիների մեջ բաժանեց։ Սմբատը դարձավ «Գունդստարին» այսինքն զորքերի գլխավոր հրամանատար, Բարսեղը՝ կրոնավոր առաջնորդ, Լևոնը՝ մարաջախտ, իսկ Օշինը ստացավ ամենաբարձր պաշտոնը՝ պալությունը⁵ և որպես այդպիսին Կոստանդին իշխանը ապստամբ հայ ֆեոդալ Վահրամից զրաված Կոոիկոս ամրոցը փոխանակ տալու ավագ թրդուն՝ Սմբատին, տվեց Օշինին⁶։ Սմբատ Գունդստարը դժգոհելով հորից, բողոքում է, բայց որովհետև Հայաստանում չկային գործող հայկական օրենքներ, հարկադրված են լինում դիմելու Երուսաղեմի օրենսդետների խորհրդին, թե նրանց մոտ ինչպես է մեկնաբանվում ժառանգական իրավունքի հարցը։ Այդ վեճի մանրամասնությունները մենք գտնում ենք «Երուսաղեմի Անսիզներին» 145 գլխում, որտեղ Կոստանդինի փեսա Հովհանդ Իպլենը «Երուսաղեմի Անսիզներին» հեղինակը, պատասխանում է հետևյալը.

1 Հ. Ջաբր հանալյան, «Թարգմանութիւնք նախնեաց», էջ 735։ Տես նաև պրոֆ. Խ. Սամուելյան, նույն տեղ, էջ 61։

2 Ն. Լամբրոնացի, տես «Լումայ» 1902, հատ. 3, էջ 322—328։

3 «Բանասեր», հատ. 4, էջ 321, տ. Ալիշան «Սիսուան» էջ 91։

4 Պրոֆ. Սամուելյան, նույն տեղը, էջ 72։

5 Կ. Գանձակեցի, «Պատմութիւն հայոց» 1909, էջ 179։

6 Ալիշան, «Սիսուան», էջ 205։

«Ով որ տեր է դարձել մի կալվածքի, կարող է այս երկրի օրենսդրքով կամ օրովորությամբ այդ տալ իր ժառանգորդներից նրան, որին կցանկանա...»¹,

Ահա այսպիսի պատմական պայմաններում Սմբատ Գուլնգոստարը ձեռնարկեց Կիլիկյան Հայոց պետականության համար դատաստանագիրք ստեղծելու ծանր գործին։ Ինչպես ասվեց, Սմբատ Գուլնգոստարը սկզբից թարգմանել է հին ֆրանսերենից «Անտիոքի Անսիզները», իսկ հետո, տեսնելով, որ ժողովրդի համար այդ օրենքները խորթ են և անընդունելի, հարկադրյալ է եղել ստեղծելու հայկական օրենքներ։ Իհարկե, առանձին ձևակերպումներ, արտահայտություններ, որոնք գործածության մեջ էին Կիլիկյան Հայաստանում, տեղ են գտել Սմբատ Գուլնգոստարի «Դատաստանագրքում», օրինակ՝ «նոմոս» փոխանակ հայկական «օրենք»-ի, «սենոռապաներ» փոխանակ՝ «սահմանապահ», «տիպոն» փոխանակ՝ կանոն, «հոլան», փոխանակ՝ եկեղեցական հագուստ և այլն։

Եվ առհասարակ ֆեոդալական հարաբերությունների համար շատ քննյալ մի շարք տերմիններ Կիլիկյանում այլ կերպ էին գործածվում, ինչպես նախարար, մարզպան, ոստիկան, հազարապետ, ազատ, սպարապետ և այլ նման բառերի փոխարեն գործածված էին պալլ, պարոն, կավալեր, Գուլնգոստար, մարաջախտ և այլն։

Որ Սմբատը իրոք սկզբից թարգմանել է «Անտիոքի անսիզները» մոտավորապես (1235—1253 թվերին) հետո կազմել իր «Դատաստանագիրքը», երևում է այն բանից, որ Սմբատը «Անտիոքի Անսիզների» առաջարանում հիշատակում է միայն Հեթում թագավորի անունը, բայց իր կազմած «Դատաստանագրքի» առաջարանում հիշում է և՛ Հեթում թագավորի, և՛ Լևոն 3-րդի անունը, որը պատմական ասպարեզ է ելնում 1265 թվականից հետո։

Այսպիսով, պարզ է, որ Սմբատը իր «Դատաստանագիրքը» կազմել է Մոնղոլիայում իր դիվանագիտական միսիան ավարտելուց և 1250 թվականին Հայաստան վերադառնալուց հետո։

Պետք է նշել, որ հայ ժողովուրդը, բացի Մխիթար Գոշից և Սմբատ Գուլնգոստարից, ունեցել է նաև ուրիշ հայ իրավագետներ, որոնց թվում կարելի է հիշատակել 8-րդ դարի հեղինակ Հովնան Օձնեցուն, Դավիթ Ալավկա որդուն (12-րդ դար), որը նույնպես Դանձակում կազմել է մի հայկական Դատաստանագիրք և որից հայագետ Կոստանյանի կարծիքով օգտվել է Մխիթար Գոշը, և վերջապես 12-րդ դարի հեղինակ Ներսես Լամբրոնացուն, որը Կիլիկիայում թարգմանել է մի շարք հունա-բուզանդական գիրավորական ու աշխարհիկ օրենքներ, որոնք լայն կերպով տարածվել էին Կիլիկյան Հայոց թագավորության մեջ և անշուշտ հայտնի էին Սմբատ Գուլնգոստարին։

Սմբատի ստեղծագործության աղբյուրը Կիլիկյան թագավորության սոցիալ-տնտեսական հարաբերություններն են, սովորությունները, կրոնա-

¹ Ալիշան, «Սխուռն» էջ 334—335. նաև Ղեոնդ Թովանյան «Հետազոտություններ նախնեաց ուսման վրա»—Վիեննա, 1879, էջ 188—189, տես նաև Վ. Հակոբյան «Հեթում պատմիչի նորահայտ հիշատակարանը և նրա պատմ. նշանակությունը» (Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. 1948 թ. № 10, էջ 64)։

² Լամբրոնացի, Ջինվորական օրենք (տես «Լուսմայ» 1902, հատ. 3, էջ 321—328)։ տես նաև Յիշատակարանը ինքնագիր և թանգամենալ գրոց։ Ներսեսի Լամբրոնացու, ի. Ալիշան, Հայագաղտում պատմիչը և պատմ. հայոց գրքում, Վիեննայի, 1901, էջ 426—433։

կան, կալվածատիրական կանոնագրքերը, որոնց մեջ տեղ էին գտել, ինչպես հողեր, այնպես էլ աշխարհիկ օրենքներ:

Հայտնի է, որ 1147 թվականին հայոց կաթողիկոսարանը էջմիածնից փոխադրվեց Կիլիկիա և իր հետ տարավ մեծ քանակությամբ կանոնագրքեր՝ ու օրենքները, որոնք դարերի ընթացքում գոյություն ունեին ֆեոդալական Հայաստանում դեռ նախարարական շրջանից սկսած: Հայ եկեղեցական միջարք ժողովների (օրինակ՝ 365 թվականին Աշտիշատի, 443 թվականի Շահապիվանի, 648 թվականի Դվինի, 447 թվականի Բարտավի, 727 թվականի Մանսկերարի եկեղեցական ժողովները) ընդունած որոշումների մեծ մասը ավելի աշխարհիկ բովանդակություն ունեին, քան կրոնական: Այդ եկեղեցական որոշումների մեջ խոսվում էր հայ զորականների, զինվորական կարգ ու կանոնների, հայ ֆեոդալների ներքին փոխհարաբերությունների, նրանց կենսադի, նիստ ու կացի մասին: Այնտեղ խոսվում էր ընտանիքի, ամուսնության, ժառանգական իրավունքների մասին և այլն: Եվ վերջապես 1243 թվականի Կիլիկիայի Հայոց թագավորության մայրաքաղաք Սսի բաղձամարդ ժողովը, որին ակտիվ մասնակցություն ցույց տվեց Սմբատ Գունգստարը, մի շարք օրենքներ մշակեց, որոնք գերազանցապես աշխարհիկ բնույթի էին կրում: Ահա այս բոլորը իրենց արտահայտությունը կարող էին գրտնել Սմբատ Գունգստարի Դատաստանագրքի մեջ:

Սմբատը իր «Դատաստանագրքը» կազմեց այն ժամանակ, երբ խաչակիրները Արևելքում մեկը մյուսի ետևից կորցնում էին իրենց տերությունները: Ահա այդ օրերին Կիլիկյան Հայոց թագավորությունը սելջուկ-թյուրքական էմիրությունների ահռելի ուժերի դեմ պետք է մենակ դուրս գար, որպեսզի կարողանար ոչ միայն պահպանել իր պետականությունը, այլև երկիրն ազատել ֆիզիկական ոչնչացումից: Սմբատի «Դատաստանագրքը» կոչված էր Կիլիկյան Հայոց պետականությունը ամրապնդելու, կազմակերպելու հայ ֆեոդալներին՝ պայքարելով նրանց կենտրոնախույս ուժերի դեմ, ձգտելով միասնական թագավորական հզոր պետականության: Եվ արդարև, այդ «Դատաստանագրքը» անշուշտ նպաստեց Կիլիկիայի պետականությանն ամրապնդմանը: Մոնղոլների վիթխարի կայսրության և Կիլիկյան թագավորության միջև եղած կապերի թուլացումից հետո խաչակիրների ստեղծած արևելյան պետությունները մեկը-մյուսի ետևից տապալվելուց հետո, Կիլիկյան Հայոց թագավորությունը կարողացավ մուսհարյուր տարի մենակ դուրս գալ արաբական, սելջուկյան և թուրքական հրոսակախմբերի սիստեմատիկ հարձակումների ու ասպատակությունների դեմ և պաշտպանել իր ազատությունն ու անկախությունը: Սմբատ Գունգստարը ոչ միայն իր «Դատաստանագրքով» կարգ ու կանոն մտցրեց անհնազանդ հայ ֆեոդալների մեջ, այլև սուրը ձեռքին, որպես Կիլիկյան Հայոց զորքերի գլխավոր հրամանատար, հիսուն տարուց ավելի մարտական պայքար մղեց արաբական ու թուրքական գիշատիչ պետությունների դեմ: 1276 թվականին 69 տարեկան հասակում իր որդիներով, իր թոռներ հետ միասին Մարաշի ճակատամարտում արաբական ու թուրքական զորքերի դեմ պատերազմի բռնվելով՝ փայլուն հաղթանակ տանելուց հետո, հերոսի փառքով զոհվեց անվանի զորավար, պատմագիր և օրենսդիր, Սմբատ Գունգստարը:

А. Галстян

О „Судебнике“ Смбата Гундстабля

Р е з ю м е

До настоящего времени арменоведами не раскрыта деятельность Смбата Гундстабля, который был не только выдающимся полководцем, военным деятелем, дипломатом Киликийской Армении XIII века, крупным историком своей эпохи, автором ряда художественных произведений, но одновременно явился составителем первого судебного кодекса Киликийского армянского государства. „Судебником“ Смбата пользовались и в более поздний период.

Смбат Гундстабль—единственный из армянских средневековых правоведов, не принадлежавший к духовному сословию. По инициативе русских ученых в 1856 году в Москве были изданы исторические труды Смбата Гундстабля, что касается его „Судебника“, то он долгое время оставался неизвестным не только арменоведам, но и тем иностранным ученым, которые занимались изданием других трудов Смбата Гундстабля. Впервые „Судебник“ Смбата стал известен арменоведам в 1870 году по статье Оганеса Мкряна „Книга законов и судебник наших царей рубенидов Гетума и Левона“.

„Судебник“ Смбата Гундстабля был издан проф. Иосифом Карстом в 1905 году в Страсбурге. Критический текст „Судебника“, изданный проф. Карстом не стоит на должной научной высоте, отдельные его статьи изданы с дефектами и пропусками. Мнение проф. Иосифа Карста о том, что „Судебник“ Смбата не имеет армянского происхождения не соответствует действительности.

Перу Смбата Гундстабля принадлежат также „Антиохийские ассизы“, которые он перевел со старо-французского языка на армянский. „Судебник“, составленный Смбатом в XIII веке, и переведенные им „Антиохийские ассизы“ строго отличаются друг от друга как по форме, так и по содержанию.

Эчмиадзинская рукопись „Судебника“ Смбата Гундстабля, изданная Арсеном Кятчяном в 1918 году в Эчмиадзине, сильно искажена. А. Кятчян фактически воспроизвел научный текст проф. Карста со всеми его ошибками.

Неверно мнение, высказанное некоторыми арменоведами (Алишан, Овнанян, Карст, Кятчян и др.) о том, что будто бы „Судебник“ Смбата Гундстабля является переводом „Судебника“ Мхитара Гоша. Не исключено, что Смбат Гундстабль мог быть знаком с „Судебником“ Мхитара Гоша и использовал его отдельные положения, но в основном для составления своего „Судебника“ Смбат Гундстабль брал современный ему материал из быта, жизни, обычаев и традиций армянского народа, использовал церковные канонические постановления, материалы церковных армянских соборов.

Попытки немецкого буржуазного армениста проф. Карста и его единомышленников доказать, что в „Судебнике“ Смбата Гундстабля заимствованы западноевропейские, а в особенности франкские законы не имеют под собой никакой почвы,

„Судебник“ Смбата Гундстабля в XIII веке имел огромное политическое значение. Смбат стремился создать крепкую централизованную власть, которая могла бы сплотить раздробленные силы армянских феодалов; вместе с тем он хотел иметь дисциплинированную, боеспособную армию, которая была бы в состоянии защитить Киликийскую Армению от агрессии соседних враждебных государств.

Смбат Гундстабль не только создал образцовый судебник своей эпохи, но и свыше 50 лет руководил армянскими войсками в борьбе с египетскими, сельджукскими и турецкими захватчиками за политическую независимость и свободу Киликийской Армении. Престарелый Смбат Гундстабль погиб смертью героя в боях за родину.